№ 5 ՄԱՅԻՍ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Է ՈՒՍՈՒՑԵԼ

Մայիս, 1895 թ.

Հայկական խնդիրը մտել է մի այլ շրջանի մէջ. այժմ սուլթանի կառավարութիւնը իւր կողմից, իսկ եւրոպական երեք պետութիւնները իրենց կողմից մշակում են Տաճկահայաստանում մոցնելիք ռէֆորմների ծրագիրներ, գոհացումն տալու հայ ժողովրդի պահանջներին... իսկ աւելի ճիշտ՝ յեղափոխական շարժման առաջն առնելու, որ արագութեամբ աճում, զարգանում, տարածւում է ժողովրդի ամէն տեսակ խաւերում և օրէցօր սպառնալից դառնում: Ահա յեղափոխական շարժման այս սպառնալից բնաւորութիւն առնելն է, որ ստիպում է ինչպէս եւրոպական պետութիւններին, այնպէս էլ սուլթանի կառավարութեան լրջութեամբ զբաղուել Հայկական խնդրով. նրանք այլ ևս անկարող են հեգնօրէն ու արհամարանքով վերաբերուել այդ շարժմանն, մանաւանդ որ նա ժողովրդային, հանրական է մի կողմից, իսկ միւս կողմից Հայկական խնդիրը կապուած է Արևելեան բարդ, կնճռոտ ու փափուկ խնդրի հետ: Հայ յեղափոխականը շատ լաւ է հասկանում այս վերջին խնդրի վերին աստիճանի փափուկ, լուրջ արժէքն ու նշանակութիւնը, որ նա ունի զինուորականութեան համար միլիարդներ մսխող եւրոպական պետութիւնների համար և նա երբէք ձեռից բաց չի թողնիլ այս հանգամանքը հուպ տալու, խեղդելու տանջած հայ ժողովրդի պահանջները արհամարողներին... Իւրաքանչիւրը իւր հերթն ունի:

Հայ ժողովուրդը շատ լաւ է տեսնում, որ իւր շարժումը տալիս է պտուղներ... որ նա ունենում է իւր ազդեցութիւնը միջազգային յարաբերութիւնների վրայ, որ շնորհիւ իւր տուած զոհերի ու թափած արիւնի, իւր պահանջը մտել է այլ շրջանի, փազիսի մէջ: Միևնոյն ժամանակ ժողովուրդը նոյնպէս շատ լաւ գիտէ այդ „ռէֆորմները“ և „ռէֆորմատորներին“. վաղուց է նա ճանաչում այդ գառնազգեստ գայլերին. առաջին անգամը չէ, որ դրանք զբաղւում են նրա վիճակով, բայց ... հետևանքը միշտ եղել է նոյնը — իրերի դրութիւնը, տիրող պայմանները բոլորովին չեն փոխուել: Եւ նորից խաղալ նրա ճակատագրի հետ, խաբել նրան ու յետ մղել իւր յեղափոխական շարժումից այլ ևս անկարող են:

Հայ ժողովուրդը արդէն հասել է քաղաքական և քաղաքացիական որոշ հասունութեան. նրա կեանքը մշակել է նրա պահանջները և նա շատ լաւ գիտէ այն պայմանները, որոնց մէջ կարող է ինքը ապրել լաւ, խաղաղ ու հաշտ և նա իւր յեղափոխական շարժումով ձգտում է դրան: Այժմ էլ աշխատել ֆիկտիւ միջոցներով մեռցնել կամ նոյն իսկ կանգնեցնել հայկական յեղափոխական շարժումը երբէք չի յաջողիլ. թող այս լաւ հասկանայ նա, որ այժմ ֆիկտիւ ռէֆորմներով է ուզում խաղալ հայ ժողովրդի ճակատագրի հետ, պահպանելու ինչպէս Տաճկահայաստանի, այնպէս էլ փոքր Փոքր-Ասիայի իրերի ներկայ դրութիւնը, քաղաքական ներկայ պայմանները: Հակառակ դիպուածում, եթէ այդ մինչև իսկ նրանց յաջողուեց, թող յամոզուած լինին, որ դա առ ժամանակեայ է, որ այդ կը նշանակէ յուզումը մի քանի աստիճան իջեցնել և առ ժամանակ ուշացնել, յետաձգել Տաճկահայաստանում կատարելիք յաղափոխութիւնը. դա ժամանակի խաղ է. մեռցնել նրան, մենք կրկնում ենք, անկարող են, մինչև նա չի հասնիլ իւր նպատակին: Նա նորից երևան կը գայ, որովհետև նրա կռիւը սուլթանի բռնակալ միապետութեան և նրա ֆակտորների դէմ է: Կայ ճնշող ոյժը, կայ և ընդդիմադրականը, կայ բռնակալ սուլթանական միապետութիւնը, կայ հայկական յեղափոխութիւնը, որովհետև հայ ժողովուրդը համոզուած է, որ ինչ տեսակ պայմաններ էլ ստեղծուին, չեն կարող գոհացուցիչ լինել, քանի որ բռնակալ միապետութեան ներկայութիւնը զգալի կը լինի: Քանի որ կայ միապետութիւնը, ապրում է նա, ապրում են և բոլոր այն խեղդող, սպանող ու ապականող ֆակտորները, որոնք այսօր էլ գոյութիւն ունին, որովհետև նրանք նրա գոյութեան համար անհրաժեշտ պայմաններ են, որովհե-

տև առանց մէկի միւսը գոյութիւն ունենալ չի կարող. հենց այս բոլորի դէմ էլ ուղղած է հայ յեղափոխական ժողովրդի կռիւը։

Ներկայ ռէժիմը ամբողջութեամբ պիտի լուծուի, քանդուի. առանց նրան ոչնչանալու չի կարող տեղի ունենալ երկրում ժողովրդների շահերի համեմատ այնպիսի մի փոփոխութիւն, որ գոհացուցիչ լինի։ Ինչ որ կատարուի սուլթանի կառավարութեան ձեռքով, նրա հաւանութեամբ, մեզ համար արժէք չի ունենալ, նա մեզ գենաթափ անել չի կարող, որովհետև միապետական ռէժիմը ոչ միայն ժողովրդի իրաւունքի արտայայտիչը չէ, այլ և նրա բռնաբարողը, որովհետև սուլթանական կառավարութեան շահերը երբէք չեն կարող հաշտուել ժողովրդի շահերի հետ, հետևապէս նրանից բխած ռէֆորմները չեն կարող և՛ բաւարար լինել. ամենաշատը նրա կողմից դա կը լինի միայն մի ստիպեալ զիճուն և այն էլ յետին մտքով. իսկ սրա համար մենք միայն կարող ենք ասել՝ — մի քայլ առաջ անցանք. . .

Եւ ե՞րբ է տեսնուած, ո՞ր ազգի պատմութեան մէջ կարող են ցոյց տալ, թէ միապետի ձեռքով կատարուած «բարեփոխութիւնը», որ երբէք չի լինում ինքնաբերաբար, յօժար կամքով ու անկեղծ սրտով, «իւր երկրում», յօգուտ ժողովրդական շահերի է լինում. ե՞րբ է պատահել, ո՞ր ժողովրդի կեանքում, որ մի որ և է բռնակալ միապետ բարոյապէս այն աստիճանի բարձրանայ, որ մոռանայ իւր միապետական շահերը, որ հրաժարուի իւր էութիւնից, իջնի մարդկային կեանքի հորիզոնի վրայ և դառնայ մարդ. . . Երբէ՛ք, չկայ այդպիսի մի օրինակ միապետութեան կեանքի մէջ։ Բռնապետութիւնները ջարդուել են, ժողովուրդը նրան մեռցրել, իւր արեան հոսանքի մէջ արիւնահեղձ է արել և մինչև իսկ բռնակալին կախաղան է հանել. ահա՛ պատմութեան դասը։ Եւ հենց այս պատմութիւնն է մեզ ուսուցել յեղափոխութեան դիմել, ուղղել կուի գլխաւոր ոյժը դէպի ներկայ ռէժիմը, քարուքանդ անել նրա գոյութիւնը պայմանաւորող հիմնարկութիւնները, ոչընչացնել բոլոր այն ֆակտորները, որոնք նպաստում են, պահպանում են նրա գոյութիւնը, որպէսզի սուլթանական բռնակալ կառավարութեան աւերակների վրայ բարձրանայ ժողովրդական-ռամկավարականը։

Այս է մեր ճանապարհը, այս ենք ընտրել, այս ճանապարհով ենք գնում և այս էլ կը շարունակենք մինչև մեր նպատակին հասնելը։

Թող որքան կուզենայ Իլդիզի լէշակեր գահակալը դեռ նոր-նոր խոստովանուի Սասունի տմարդ կոտորածի ճշտութիւնը, թող որքան կուզենայ հրամաններ արձակի լայն ասպարէզ տալու Քննիչ-Յանձնախմբին, իբր թէ արդարութիւնը իւր ամբողջութեամբ երևան հանելու և յանցաւորին ըստ արժանոյն պատժելու, թող նա «ռէֆորմների» ծրագիրներ մշակի. այդ բոլորը միևնոյն է մեզ համար. մեր տրամադրութիւնը դէպի լէշակերը, դէպի Սասունի կոտորածի իսկական յանցաւորը մազաչափ անգամ չի փոխուիլ, եթէ մինչև իսկ նա անկեղծ լինի, որի մասին ի հարկէ մենք միշտ կասկածում ենք. հայ ժողովրդի և սուլթանի լէշակեր կառավարութեան մէջ ո՛չ մի հաշտութիւն երբէ՛ք լինել չի կարող։ Հայ ժողովուրդը ոչի՛նչ նրանից չէ հայցել և չէ հայցում, նա երբէ՛ք չի ստորանալ, բռնակալի ոտերի տակ չի՛ սողալ։ Հայ ժողովուրդը, իբրև մարդկութեան անդամը, իբր նրա զաւակը, պահանջում է, կրուում է իւր մարդկային իրաւունքների համար, որ դաբերից ի վեր բռնաբարուում են. նա գիտէ, որ միայն յեղափոխութիւնը կարող է իրեն հասցնել այդ բարձրութեան և ահա հեռու չէ ժամը. . . վաղը կամ միւս օրը նա կը խրի յեղափոխական սուրը բռնակալութեան սրտի մէջ նրան մեռցնելու. միայն բռնակալութեան մահը կարող է աւետել ժողովրդներին եղբայրութիւն, միայն նրա դիակի վրայ կարող է բարձրանալ ժողովրդների ազատութիւնը. . .

ՆԱՄԱԿ ԽՆՈՒՍԻՑ

Իրերի դրութիւնը մեր կողմերում վերջին դէպքերի շնորհիւ ենթարկուել է զգալի փոփոխութիւնների։ Դատարել են քրդական բարբարոսութիւնները, կառավարութիւնը թուլացրել է իւր խստութիւնները։ Անցեալ տարի գիւղերումն նշանակուած ոստիկանական հսկողութիւնը գոյութիւն ունի միայն անունով։ Պարզ երևում է, որ քանի տան մէջ ուրիշ մարդ կայ, թէ կառավարութիւնը և թէ մահմեդական ազգաբնակութիւնը զգուշանում են սանձարձակութիւններից։

Քննիչ Յանձնաժողովը այստեղ օրւայ խնդիր է։ Սկզբում կառավարութիւնը աշխատելիս է եղել արգելել հայերին բողոքելու, բայց Յանձնաժողովի դեսպաններին արած դիմումների շնորհիւ, բողոքելը թոյլատրուած է, թէև կառավարութիւնից ուղղակի ճընշումներ էլի լինում են։

Հարստահարութիւնների մանրամասն տեղեկագիրներ տուել են Յանձնաժողովին Խնուսի և Բուլանըխի բոլոր գիւղերից, Բասենից և Կարինից նոյնպէս։ Յանձնաժողովը իւր մտ է հրաւիրել Բուլանըխի գիւղապետներին մի քանի փախցրած աղջիկների քննութեան համար։ Սասունցիներից նոյնպէս բողոքներ են տուել։ Յանձնաժողովը երևի մտ օրերս կերթայ Սասնոյ գիւղերը։

Սուրբ Կարապետի միաբաններից Եսայի և Կարապետ

վարդապետները, Մուշի տէր Բարսէղը, Ս. Յովհաննու վանքի վանահայրը և մի երկու ուրիշը ներկայացրել են Յանձնաժողովին զեկուցագիր, որի մէջ Սասնոյ կոտորածը վերակրում են հայերին և նոցա մէջ գտնուող խռովարարներին։ Լուր կայ, թէ դրբա յետոյ երևի կողմնակի ճնշման տակ տուել են երկրորդ զեկուցագիր, որը հերքում է առաջինն։

Կառավարութիւնը աշխատում է Սասնոյ կոտորածը վերագրել տալ քիւրդ աշիրաթներին և ազատել կանոնաւոր զօրքը որևէ պատասխանատուութիւնից այդ բանում։ Խիրզանցի աշիրէթի ցեղապետ Խշման աղան, որը չի կամեցել կառավարութեան տուած հրահանգների համեմատ ցուցումներ անել Յանձնաժողովին, Մուշում բանտարկուած է։ Խշման աղան բացարձակապէս յայտնել է, որ կառավարութիւնը դրդեց աշիրէթներին կուի, իսկ կոտորածը կատարել է գլխաւորապէս կանոնաւոր զօրքը։

Յանձնաժողովին ներկայացել են սէնի վերքեր կրող բազմաթիւ սասունցիներ։ Տրուած տեղեկագիրների մէջ ամենագլխաւոր բողոքը կառավարութիւնից է արած։

Յանձնաժողովը իւր յարաբերութիւնը Կարինի հետ պահպանում է սեփական փոստով։

Ժողովրդի տրամադրութիւնը ամեն տեղ Յանձնաժողովի առիթով չափազանց լաւ է։ Հարիւրաւոր ոսկեղօծ լուրեր ամեն օր թարմ թարմ գալիս անցնում են երկրի մի ծայրից միւսը։ Լուրեր տարածողը գլխաւորապէս իրանք քրդերն, թուրքերը և կառավարութեան պաշտօնեաներն են։ Ժողովուրդը այդ լուրերից ազդուած շատ և շատ բաներ է սպասում Եւրոպայի միջամտութիւնից...

Շնորհակալութեան հանրագիրներ ձեռք բերելու համար կառավարութիւնը իւր կաշուից դուրս է գալիս։ Առաջարկել են շատ տեղ, բայց մինչև այժմ յաջողութիւն չեն գտել։

Սասունի կոտորածի մասին ամեն տեղ հարց ու փորձ եմ անում. անձամբ քննեցի գաղթական սասունցիներին, նոյն իսկ շէնիկցի Գրիգոյի եղբօրը, քրոջը և այլն։ Ինչպէս պատմում են, Դալորիկում ոչ մի մարդ, տուն չկայ այս բոպէին։ Մնացեալ գիւղերում գտնւում են առ առաւելն 5-6 տուն բնակիչ։ Բոլոր գիւղերը այրուել են. Խնուսի ու Մուշի կողմերը գտնւում են բազմաթիւ գաղթական սասունցիներ։ Դալորիկի փախստականները գիմել են Տիգրանակերտի կողմերը։ Գաղթականները պատսպարուել են գիւղերում և ապրում են գիւղացիների միջոցներով. կառավարութիւնից ոչ մի նըպաստ չի եղել։ Նոքա ցանկութիւն են յայտնում վերադառնալ նորից Սասուն, եթէ իրանց պէտք եղած օգնութիւնը լինի։

Աւելի ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ կը գրեմ շուտով, երբ տեղը վրայ կուսումնասիրեմ խնդիրը և կուղարկեմ ընդարձակ տեղեկագիր։

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Այս տարի մեր բարեկենդանը անսպասելի կերպով նորէն դառնացաւ շարք մը նորանոր ձերբակալութիւններով, նոր բանտարկութիւններով, որոց թիւը յանգաւ 200-ի։ Բանտարկութիւններ և խուզարկութիւններ կատարուեցան Ստամբուլ, Ղալաթեայ, Մաքրի գիւղ, Ղազի գիւղ, Պերա, Իւսկիւտար և Իշխանաց կղզիները։

Ինչ որ մարդիկ բարեկենդանին տոմսերով հանգանակութիւն ձեռնարկած էին և բազմաթիւ տոմսեր բաժանած. տոմսերու ամենաբարձր գինը 20, իսկ ամենաընչազը 3 դահեկան էր։ Տոմսերու վրայ գրուած էր. „Նվիրատվութիւն մահասարսուռ Սասնոյ զոհերու և սուրբ գործին“ պարբերութիւնը, կնքուած կնքով։ Ահա այս տոմսերը ձերբակալուեցան և ասոր մը ետևից բազմաթիւ անմեղներու բանտարկութիւնը։ Բանտարկեալներու մէջ ամեն կարգի մարդ կը գտնուի։ Սկսեալ խոհարարէն, համալէն, օդաբաշիէն մինչև խանութպան և գրագէտ։ Տղայական արարքը, որ ոչ առաջինն է և ոչ վերջինը, ընդհանուր տրտունջ, դժգոհութիւն առաջ բերած է Պոլսոյ ամեն շրջանակներու մէջ։ Բացի բազմաթիւ ձերբակալութիւնէն, շատերն ալ իրենց օձիքը ձեռք չտալու պատճառով հարկադրուեցան ոչինչ պատճառի համար փախչել։ Արժէր մի թէ 3-10-20 ղուրուշի համար այսչափ կեանքեր վտանգի ենթարկել և այսչափ զոհեր տալ։ Մարտի սկիզբները ոմանք ազատուեցան, բանտէն ելան շնորհիւ դեղին ոսկիներու և միջամտութիւններու, բայց շատերը տակաւին կը մնան բանդերու մէջ։ Կըսուի թէ ձերբակալած է բազմաթիւ տոմսերու հետ և անոնց կնիքը։

Երեք օր առաջ լուր տարածուեց թէ պայրամի տօնի առթիւ բոլոր հայ հոգևորական բանտարկեալներուն ներումն պիտի շնորհուի։ Պայրամն ալ անցաւ, բայց տաքածուած լուրը չստուգուեցաւ։ Այս խնդրոյ մասին ահաւասիկ մեր ստացած ամենաստոյգ տեղեկութիւնը։ Բ. Դուռը բանակցութեան մտած է Իզմիրլեան պատրիարքի հետ, բանտարկուած և աքսորուած բոլոր հոգևորականներուն ներումն շնորհելու խնդրոյ առթիւ առաջարկուած են հետևեալ պայմանները. — 1) Ներման արժանացած բոլոր հոգևորականները անպայման Պոլիս պիտի մնան, 2) Ներման արժանացած հոգևորականները հանդիսաւորապէս պիտի երդուին Մայր եկեղեցիի մէջ այսուհետև այլևս երբէք կայսերական կառավարութեան դէմ անհաւատարիմ, անհնազանդ ընթացքի մէջ չգտնուին, 3) Մայր եկեղեցիի մէջ ներման արժանացած հայ հոգևորականները, միանալով Պոլսոյ եկեղեցական դասու հետ, փառաբանական մաղթանքներ կատարեն սուլթանի արևշատութեան 4) Իզմիրլեան պատրիարքը շնորհակալութեան ուղերձ մատուցանէ յոտս կայսերական փշրուած գահոյից։ Պատրիարքը մերժած է վճռապէս յիշեալ պայմանները, իսկ սուլթանն ալ առանց այս պայմաններու չէ ուզած ներումն շնորհել։ Խնդիրը առ այժմ հոս է։

* * *

Երուսաղէմէն անցեալ շաբաթ հոս բերուեցան Ա-բրապկերի առաջնորդ Եղնիկ եպիսկոպոս և Ատանայի առաջնորդ Վեհապետեան Մկրտիչ եպիսկոպոս, որոնք 3 տարիէ ի վեր աքսորուած էին Երուսաղէմ։ Պատրիարքը շոգենաւը մարդ ուղարկեց յիշեալ եպիսկոպոսները առնելու համար, բայց մերժուեցաւ, ուստի ստիպեալ դիմեց ոստիկանութեան նախարար Նազըմ փաշային, որը պատասխանած է, թէ այդ կախեալ է դատական գործոց նախարարէն, ուստի կը դիմի դատական գործոց նախարարին. սա ալ կը պատասխանէ, որ ինքը չի կրնար եպիսկոպոսները յանձնել և այդ մասին պէտք դիմել մեծ Եպարքոսին։ Եպարքոսն ալ կը պատասխանէ, ինքը նոյնպէս չի կրնար այդ մասին ոչինչ ասել, որովհետև այդ կայսեր կամքէն կախեալ է։ Մինչ այս մինչ այն եպիսկոպոսները ոստիկանութեան հսկողութեան տակ կը տանեն հասարակ հիւրանոց մը, մինչև որ պատրիարքը կը դիմէ պալատ և ուր ուրեմն կը յանձնեին եպիսկոպոսները պատրիարքարանին։ Սուլթանի կառավարութիւնը նորէն կը պահանջէ, որ յիշեալ եպիսկոպոսները երդուին՝ բայց Իզմիրլեան կընդդիմանայ, առարկելով, որ ինքը չի կրնար թոյլ տալ, որ եպիսկոպոսները իրենց չգործած յանցանքի համար երդուին. հակառակ պարագային, այսինքն եթէ եպիսկոպոսները յանցաւոր են, դատին, իսկ ինքը քաջ գիտէ, որ յիշեալ եպիսկոպոսները ոչ միայն յանցաւոր չեն, ոչ միայն անմեղ են, այլ և բոլորովին անիրաւ, անարդար ցարդ տուժած են, շնորհիւ քանի մը անխիղճ թուրք պաշտօնեաներու զրպարտութեանց զոհ են։ Սուլթանի կառավարութիւն տեղի կուտայ և այլ ևս երդման վրայ չի պնդեր։

Պոլսի ոստիկանութեան բանտը կը կգտնուին այժմ հետևեալ հոգևորականները, որոնք տակաւին չյանձնուեցան պատրիարքարանին, որոնց համար քանիցս դիմումներ եղան Իզմիրլեանի կողմէն։ Ահա ատոնց անունները. Կարապետ եպիսկոպոս՝ Զէյթունի, Ղևոնդ քահանայ՝ Զէյթունի, Նշան քահանայ՝ Պոլէճիքի, Ստեփան քահանայ՝ Պոլէճիքի, Միքայէլ քահանայ՝ Ունեայի և Թաթուլ քահանայ՝ Զարշամպայի։

***

Ամասիա ծիծաղելի դէպք մը պատահած է վերջին օրերը։ Թուրք հասարակութիւնը կը տեսնի թուրք գերեզմանի մը վրայ երկար գաւազան մը տնկուած, որի ծայրը գերեզմանին հողին մէջ թաղուած, իսկ վերի ծայրին փակցուած մի երես թուղթ ղուրանի գրքէն, վրան կային աղտեղութիւնք քսուած։ Թուրքերը կատաղած, ուզելով այդ գաւազանը առնելով տանին կառավարութեան յանձնելու, որ գեաւուրները ըրած են այդ նախատինքը իրենց կրօնական զգացմանց դէմ, կը նայեն որ գաւազանի վարի ծայրը կապուած հողին տակէն մի ամբողջ ղուրանի գիրք մը դուրս կելնէ, նոյնպէս աղտեղութեամբ օծեալ։ Թէքքէի մը պատերն ալ աղտեղութեամբ ծեփուած տեսնելով, մոլեռանդ թիւրք տարրը վերջին ծայր կը կատղի հայերու դէմ և կուզէ կոտորել, բայց կառավարութիւնը կատղած խուժանը կը զսպէ, վախցնելով, իբր թէ կոտորած մը ըլլայ, գեաւուրները կուգան և մեր երկիրը մեր ձեռքէն կը խլեն, և յետոյ կառավարութիւնը կսկսէ ամեն կողմ ձերբակալութիւններ անել։ Կը բանդարկուին 250 հոգի։ Հայերը կը պնտեն, որ այդ իրենց գործը չէ, բայց բոլորը անհետևանք կանցնի և 250 հոգի բանտերու մէջ կը տառապեն։

Քանի մը օր ետքը կիմացուի, որ այդ ընողը նոյն իսկ մի խելացնոր, յայտնի խենթ, խելագար թուրք մըն է, բայց կառավարութիւնը չուզեր բան լսել և ոչ ալ կուզէ, որ խենթը երևան ելլէ, թէև ամբողջ քաղաքը սկսած ամենապզտիկէն մինչև ամենամեծը, կատարելապէս համոզուեցաւ, որ ինքը սխալուած է, որ այդ յիշեալ խենթի գործն է, բայց կառավարութիւնը յամառութեամբ կը շարունակէ խենթի գործը գեաւուրներուն վերագրել... լաւ միջոց մը ալ կեղեքելու հայերը։

ՆԱՄԱԿ ԳԵՐՇԷՀՐԻՑ

Գերշէհրի գաւառակի Տէհիկ-Մատէնի գիւղաքաղաքը հազարի չափ տուն կը պարունակէ. բնակիչներուն մեծագոյն մասը քրիստոնեաներ են։ Մալ-միւտիր Աբիֆ էֆ. գիւղաքաղաքի ժողովուրդը իբր քաղաքական յանցաւորներ դատապարտելու և զանոնք կողոպտելու նպատակով, կառավարութեան դէմ կարգ մը ազդագիրներ հեղինակելով և փողոցներու վրայ փակցնելէ վերջ, շատ մը հայերով բանտերը լեցուց։ Այն բռնաբարիչը իր նպատակը գործադրելու համար, բանտարկեալներէն սպառնալիքներով ստակ կը պահանջէ զանոնք ազատ արձակելու համար։ Բայց ասոնք երբ կըմերժեն անոր պահանջները, կատղած կսկսի անխիղճ կերպով չաչքրել զանոնք։ Անգարայի կառավարութեան կատարած քննութեամբ թէև կը հաստատուի, որ ենթադրուածներն ամբողջ Աբիֆ էֆ. գործերն են և ժողովուրդը ոչինչէ տեղեկութիւն չունի, ինչ որ կը հաստատուի անհերքելի փաստերով։ Այս մասին տեղւոյն կառավարութիւնն կատարեալ համոզում կը գոյացնէ. ինչ օգուտ որ անմեղ բանտարկեալներէն 7 անձ դատապարտելով Փայասի բերդը կը ղրկուին։ Ասոնք 22-25 տարեկան երիտասարդներ են, որոնց մէջ կը գտնուի նաև 12 տարեկան մատաղ տղայ մ՚ալ։ Մնացեալ բանտարկեալներն ալ Մատէնի և Գերշէհրի բանտերու մէջ կը պահուին։ Այս անմեղներուն քաշած չարչարանքներն և բուն յանցաւորներու սանձարձակ ու ազատ գործառնութիւններն մարդոյ արդար բարկութեան կայծակներն կը հրաւիրեն պատժելու համար բռնաւոր տէրութիւն մը, որ բոլորովին արդարադատութիւնէ զուրկ և մարդասիրական զգացումներէ իսկապէս հեռի է։

Եօզղատի երեքշաբթի և ուրբաթ օրայ դէպքերու վրայ կանխապէս ընդարձակ տեղեկութիւններ գրուած են և այս տեղեկութիւններու ստոյգ լինելը մէկ քանի

հիւպատոսներու տեղագիրներով ալ հաստատուածէ։

Ուրբաթի դէպքին մէջ, կանոնաւոր զօրքերը (Նիզամիյէ) և բաշիբուզուկները շուկաներուն, հրապարակներուն և փողոցներուն վրայ յարձակելով խաղաղ բնակիչների 13 հատը սպանած և 80 հատը վիրաւորած են։ Ցիշեալ պատահարը քննելու և իսլամներու իրաւունքները պաշտպանելու համար, Մուսթափա փաշայի տակ կազմուած ու եկած յանձնախումբերը, փոխանակ քրիստոնեաների արցունքը սրբելու և անոնց վէրքերը դարմանելու, անոնցմէ մէկ քանիսները վիրաւոր և մէկ քանիսները ոգևար վիճակի մէջ 250-ի չափ մարդ նետեցին բանտերն և երկար ատեն հազար ու մէկ խայտառակութիւններու և չարչարանքներու ենթարկեցին։ Մինչդեռ իսլամներէն և ոչ մէկ անձ ձերբակալեր են։ Արդէն կառավարութեան ձեռքով պատրաստուած և գործադրուած այս վայրենութեան ու ահարկութեան համար գոնէ ձևի համար մէկ քանի իսլամ հրոսակներու չը ձերբակալելը պատճառ եղաւ այնպիսի նոր և աւելի անհաւատալի վայրագութեանց, որոնք կը գերազանցեն երեքշաբթեան և ուրբաթ օրուան կոտորածներն։

Սոյն դէպքին մէջ բանտարկած 250 անձերէն 17 հատը արձակած են։

Անգարա ղրկած Գասպար, Համբարձում, Ցակոբ և 20-ի չափ ընկերները, թէև յաջողեցան Անգարայի դատարանին առջև հաստատել իրենց անմեղութիւնը և մինչ կը յուսացուէր, որ ասոնք անպարտ պիտի արձակուին, օրէնքը իրենց քմայքին համեմատ գործադրող պաշտօնեաները և մեծերը այս իրենց հաճոյքին յարմար չնկատելով, դարձեալ Եօզգատի դատարանին կամ աւելի ճիշտ ըսելով, դահիճներու անգութ ձեռքը յանձնեցին։ Մատաղ երիտասարդները չարչարանաց դժողքը եղող մութ բանտերու մէջ կը չարչարուին. թէ կառավարութիւնն և թէ յանձնախումբը լաւ հասկցած ու հաւատացած են։ Բռնապետներէն Խալիլ, Լութֆի, Հալիթ պէյերն և Սալին, հաճի Հաշիմ էֆէնտիներն ու ասոնց ընկերներն առանց պատժի մնալէ զատ, արժանի եղած են իթթիհատ նշանի, որ ոչ միայն քրիստոնեաներուն, նոյն իսկ խելքը գլուխն իսլամներուն զարմանք պատճառած է։

Ահա Մուսթափա փաշայի նախագահութեամբ եկած յանձնախմբին պտուղներն ասոնք և ասոնց նման բաներ են։

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԻԶԱԿԻՑ

Սուլթանի կառավարութիւնը ինչպէս պրեց մոխիր դարձուց Նիկոմիդիոյ գաւառի Արսլանբէկ 500 տունէ բաղկացած անխառն հայաբնակ գիւղը, ինչպէս պրեց Հայճէն քաղաքի հայոց 700 տունը, վերջերս կը վճռէ այրել և Նիկոմիդիոյ գաւառի Պարտիզակ աւանը, որ նոյնպէս զուտ հայաբնակ է և իր բարգաւաճութեամբ, բարոյութեամբ, յառաջադիմութեամբ փուշ մըն է Սուլթանի կառավարութեան աչքին։ Բարի թուրք մը գաղտնիքը կը յայտնէ քանի մը հայերու, որ զգոյշ լինին, հակառակ իրենց տուներու վրայ, որովհետև մօտերս թուրքերը պիտի այրեն իրենց գիւղը։ Հայերը լուրը կը հաղորդեն տեղական կառավարութեանը։ Կառավարութիւնը հայերուն կը բանտարկէ իբրև խռովարարներ, զրպարտիչներ և կայսերական կառավարութեան անհաւատարիմներ։ Խեղճերը իրենց անձը արդարացնելու, իրենց վրայ բարդած ամբաստանութիւնները հերքելու համար կոստիպէին գաղտնիքը երևան հանել և բարի թուրքի անունը կուտան։

Թուրքը գէթ իր անձը և ընտանիքը փրկելու համար բանտէն, գուցէ նոյն իսկ մահէն, կոստիպէի վախէն ուրանալ ճշմարտութիւնը, որով աւելի կը ծանրանայ հայերու վրայ ամբաստանութիւնը։ Հայերը տակաւին բանտը են և գուցէ երկար ալ մնան, ունեցած չունեցածը ալ վրան տան։ Այս անմիտ հայերը իրանց անխոհեմութեան, անգաղտնապահութեան արժանի արդար պատիժը ստացան և միւս կողմէն վշտացուցին բարի և հայասէր թուրքը։ Պարզամիտ հայեր, որ տակաւին չի կրցին ճանչնալ սուլթանի խայտառակ կառավարութիւնը, հաղարաւոր դառն փորձերէն ետքը տակաւին արդարութիւն կը յուսան. իսկ միւս կողմէն կը վշտացուցնեն, կը հեռացուցնեն իրենցմէ իրենց անմտութեամբ սակաւաթիւ ազնիւ, լուսամիտ թուրքերուն ևս։ Հայ ժողովուրդը միանգամ ընդ միշտ թող համոզուի, որ իր միակ երդուեալ արիւնարբու թշնամին սուլթանի կառավարութիւնն է իր աւազակ, բարբարոս և անբարոյական պաշտօնեաներով՝ սկսած յետին զապթիյէն մինչև նախարարները, եպարքոսը և աւազակապետ սուլթանը։ Ահա մեր կոիւը որոց հետ է։ Մենք խաղաղ, հարստահարուած, ճնշուած թուրքի, քիւրդի դէմ ոչինչ չունինք. անոնք մեր բարեկամը, մեր զինակիցը պիտի լինին սուլթանի բռնապետութիւնը տապալելու, կործանելու համար։ Ուստի անմտութիւն է կասկածելի ընել այս սակաւաթիւ մեր ազնիւ բարեկամ թիւրքերուն, որոնք ոչ միայն ի հարկին մեզ կօգնեն և վերահաս վտանգէն կը զգուշացնեն, այլ և այդ սակաւաթիւները պիտի խմորեն, պատրաստեն տգէտ, մոլեռանդ թուրք խուժանը, որը տգիտաբար կը զոհէ իր զաւակները, կը յարձակի, կը կոտորէ մեզ միմիայն զօրացնելու, կանգուն պահելու համար սուլթանի քայքայուած, լէշակեր բռնակալութիւնը, որ ինչպէս մեր, հայերուս, նոյնպէս թուրքի, քիւրդի երդուեալ թշնամին, կողոպտիչը, կեղեքիչը, հարստահարիչն է...

ՆԱՄԱԿ ՆԻԿՈՄԻԴԻԱՑԻՑ

Սուլթանի կառավարութիւնը Նիկոմիդիոյ վիճակի հայաբնակ քաղաքներու, գաւառներու, գիւղերու վրայ հսկողութիւնը և կասկածամտութիւնը ծայրայեղութեան հասցուցած է։ Ամենաանշան դէպք մը առասպելական մեկնութիւն, անհաւատալի բացատրութիւններ կստանայ և տեղական իշխանութեան կողմէն կը տեղեկագրի կեդ-

ռոնական կառավարութեան։ Այս սխալ տեղեկագրութեանց կը պարտինք վերջին ամիսներուս խստացուցած հսկողութիւնները։ Նիկոմիդիոյ բոլոր գիւղերու վրայ Թուրք գիշերապահներ կարգուած են քանի մը ամսէ ի վեր։ Թուրք գիշերապահներու անունդը, ամսականները գիւղացիք պիտի վճարեն։ Անցեալները քանի մը տաք գլուխ երիտասարդներ տղայութիւն մը գործեցին և այժմ ատոր պատիժը կը տուժեն։ Գիշեր մը քանի մը երիտասարդներ կը յարձակին Զէնկիլլէր գիւղի Թիւրք գիշերապահներու վրայ։ Ամենուրեք ժողովուրդը սաստիկ դժգոհ է այս նոր կարգադրութիւնէն և օր աւուր ժողովրդի տրտունջը մեծ չափեր կստանայ։ Շատ գեղեր տեղական կառավարութիւններուն դիմումներ ըրին, խնդրեցին, որ յիշեալ Թուրք գիշերապահները հեռացուին, որովհետև իրենք աղքատ են, չեն կրնար անոնց ամսականները հատուցանել և թէ իրենք կը պահպանեն իրենց գիւղերը, բայց ապարդիւն մնացին բոլոր դիմումները։ Գիշերապահները իբր թէ կը հսկին եղեր, որ հայերը իրենք իրենց տունները չայրեն և յետոյ Թուրքերուն մեղադրեն։ Անմիտ, ծիծաղելի խնամատարութիւն։ Զինկէլլէր գիւղի քանի մը երիտասարդներ տեսնելով, որ ապարդիւն անցան, գիշեր մը կը միաբանին, կը յարձակին գիշերապահներու վրայ, լաւ մը կը տփեն, աղ ու աղցան կանեն և ձեռք ու ոտքերնին կապած գիւղէն դուրս կը հանեն ու կը սպառնան, որ եթէ մէյմըն ալ իրենց աղտոտ քթերնին գիւղի մէջ երևցուցին, էշու պէս կտոր կտոր կանեն։ 3 օր առաջ էշ մը մորթած, կտոր կտոր արած կըլլան յիշեալ երիտասարդները և գիւղի զանազան կողմեր ցրուած, որ կը նախազգուշացուցեն եղեր գիշերապահներուն, որ եթէ իրենց յօժար կամքով չհեռանան, էշու վախճանը կունենան։ Գիշերապահները անուշադիր կը թողուն եղած սպառնալիքը և կը շարունակեն իրենց պաշտօնը, որը կը վերջանայ գիշերապահներու սոսկալի ծեծով։ Գիշերապահները կերթան կը գանգատին գայմագամին։ Այժմ յիշեալ երիտասարդները կը փնտուին, բայց ցարդ չձերբակալուեցան։ Վեհափառ Սուլթանի շնորհիւ։

Սուլթանի կառավարութիւնը՝ չգոհանալով նշանակուած գիշերապահներով և կասկածելով, վախենալով ապագայ յուզումներէն, որովհետև ժողովրդական դժգոհութիւնները օր աւուր սպառնական դիրք կստանան, որովհետև Նիկոմիդիոյ վիճակի հայերը բազմաթիւ են և ինքն ալ զօրք չունի, սկսաւ Թուրք ազգաբնակութեանը զէնքեր բաժանել, ռազմամթերք պատրաստել, որ ի հարկին զէնքի ոյժով խեղդէ հայկական շարժումները։ Անցեալ շաբաթ մեծ քանակութեամբ զէնքեր և փամփուշտներ ուղարկուեցան Պոլսէն բաժանելու համար Թիւրք ազգաբնակութեանը։

Թիւրքերու և հայերու յարաբերութիւնները օր աւուր աւելի և աւելի թշնամական, սուր կերպարանք կստանան։ Սուլթանի կառավարութիւնն ալ իր կողմէն ոչինչ ջանք չի խնայիր Թուրք մոլեռանդ խուժանը գրգռել հայերու դէմ, բայց միւս կողմէն շատ ալ կը վախնայ, որովհետև հայը համեմատաբար շատ է այս գաւառի մէջ և շատ ալ կորիւ է, ատկէ զատ հայերն անխառն կը բնակին և միմեանց ալ շատ մօտ և ի հարկին կրնան իրար օգնութեան հասնել։ Հայերը եթէ իրենք ևս իրենց կողմէն հարկ եղած պատրաստութիւնը չը տեսնեն, հարկ եղած զգուշութիւնները ձեռք չառնեն և չը միաբանեն, կրնան ոչխարի պէս կոտորուել զինուած, մոլեռանդ Թուրք և չերքէզ խուժանէն։ Հայ ժողովուրդը ամենուրեք եթէ չուզեր ջնջուիլ, ոչխարի պէս կոտորուիլ բերնէն, հացէն, հագուստէն, ամեն բանէ պիտի իրեն զրկէ, խնայութիւն ընէ և պատրաստութիւն տեսնէ, զինուէ. այսուհետև զէնքը, հրացանը, դաշոյնը, ռէվոլվերը հայու մարմնու անբաժան անդամներէն մէկը պիտի ըլլան, եթէ կուզէ իբրև մարդ ապրել և ոչխարի պէս չմորթուիլ, ինաջինջ չըլլալ։

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

I

Մարտ 18-ին շաբաթ օր տեղիս անուանի սրիկայ Քեահեա օղլի Գալիպպէյ, որու շահատակութիւնները շատ շատ են, քաղքին Տեղերմէնդէրէ ըսուած տեղը առանց պատճառի կուի բռնուեցաւ հայ երիտասարդի մը հետ և մտրակի 10-15 հարուած իջեցուց։ Այն օր իր բարբարոսութեան գագաթնակէտին հասած էր. ամեն հանդիպողին հայհոյեր, ծեծեր է, նոյն իսկ զինուորականներու նախատական խօսքեր տեղացեր է։ Նոյն օրուայ երեկոյան ժամը 2-ին մօտ սա՝ իր հետ ունենալով 4-5 պատուական ընկերներ, կը մտնէ քաղքին հրապարակին վրայ Օգսենտի սրճարանը և իր բարձր գալուստը իմացնելու համար կսկսի սրճարանին ապակիները կարգաւ կոտրտիլ. մէկ վարկեանի մէջ սրճարանը մարդ չմնար, բոլորն ալ մէկիկ մէկիկ կը փախչին. մենակ Պօղոս Մինասեան անուն հայ երիտասարդ մը անտարբեր նստած տեղը կը մնայ։ Սրիկային ջղերուն կը դիպչի ադոր անտարբերութիւնը և պոռալով թէ „օլան, կեավուր սէն մի գալդէն պէնդէն գորգ մայան, չիք դիշարի“ (ծօ, անհաւատ, դո՞ւ մնացիր ինձմէ չվախող, կորսուէ դուրս) հայհոյութիւններ, ռէվոլվերը կը քաշէ և կարձակէ։ Պօղոս, ճարպիկ գտնուելով, արձակած ժամանակ սրիկային թեւին հարուած մը տալու կը յաջողի և գնդակը գլխէն քիչ բարձր կը նետի առանց մէկու մը վնասելու։ Գալիպ ռէվոլվերի անյաջողութիւնէն կատղած խէնջարը կը հանէ սպանելու դիտաւորութեամբ, բայց այս անգամ ալ չի յաջողիր և հետզհետէ բազմութիւն և „բոլիսներ“ը գալով կը բռնեն հազար զօրով Գալիպը.... իր տունը տանելու։

Վալի պէյը՝ սաստիկ բարկացած, հրաման կը նէ ձերբակալել այդ „փուշտ“ (վալիին սիրեկան բառն է և կը նշանակէ...) սրիկան, յիսնապետ, հարիւրապետներ իրար ետևէ կը զրկէ Գալիպը ձերբակալելու.... բայց դժբաղդութիւնը տես, որ Գալիպ ինքնիրեն չնկաւ անձնատուր ըլլալու և իր տան մէջ նստած քէֆին կը նայի։ Ո՞վ պիտի համարձակի տնէն ներս ոտք կոխելու,

վալեին զրկած մարդիկը, բայց այդ ալ մեծ յանդգնութիւն է, որ չունին բարեջան պաշտօնեաները և Գալիպ՝ „շնորհիւ վեհ.“ սուլթանի կառավարութեան 4-5 օր է ի վեր դեռ չէ ձերբակալած և ինքն ալ միտք չունի յանձնելու։

Բայց չէ՞ որ դեռ 3-4 ամիս առաջ ֆրանսիացի ուսուցիչ մ'ալ պիտի մեռցնէր անոր տան մէջ և անպատիժ մնաց, քանի քանի հայ, յոյն տղոց պատիւը բռնաբարեց և դատարանի երես չտեսաւ, որուն ծեծեց և պօլիսներ եկան ծեծուողը գէթ իր ձեռքէն ազատեցին. դեռ երկու ամիս չէ եղած, Գալիպը չէ՞ր որ „պօլիսխանէին“ մէջ պոռալով վախցուց կօմիսերը և իր գինով ընկերները բանտէն ազատեց ու անոնց ռէվօլվերը ետառաւ, և այս ամենը՝ շնորհիւ „արդարադատ“ սուլթանի չքնաղ կառավարութեան։ Գալիպ սրիկայ մէ բառի բուն նշանակութեամբ, քաղքին պատուհասը. մինթէ կառավարութեան պարտքը չէր գէթ անոր արարքները քիչցնեն ևն.։ Բայց „պարտք“, „պարտականութիւն“ բառերը ալ ջնջուած են սուլթանի կառավարութեան բառարանէն։ Ամենագլխաւորը անոր համար վալիներ կը վախնան սրիկային մազին դպչելու, որ Գալիպ ազդական կին մ'ունի եղեր սուլթանի հիւրիներուն մէջ։

15-20 օր առաջ Բլաթանայի ճամբուն վրայ թուրք աւազակներ հայ կառապան մը կողոպտեցին և ոտքէն վիրաւորեցին ծանրապէս. թէև ձեռք անցաւ աւազակներէն մին, բայց կը յուսացուի „շնորհիւ“ ներողամիտ վեհ. սուլթանին, մօտ օրերուս մէջ կարձակուի։

*
* *

Մարտ 25-ին տեղս բերուեցան Երզնկայէն Տ. Վարդան վարդապետ և արմտանցի Տ. Կարապետ քահանայ Եղիկեան, և նոյն օր Կուրճի ընկ. շոգենաւով Կ. Պոլիս փոխադրուեցան կառավարութեան կողմէ։

Նոյն օր Սամսունէն տեղիս բանտը փոխադրուեցան 5 անձինք՝ Նշան Զերազեան Զարշամպայի վաճառական, որ ուրիշ փախստական Նշան անուն անձի մը մեղքը քաւելու համար բանտարկուած է. մանաւանդ որ իւր քսակն ալ պարարտ է. Զարշամպայի գիւղերէն - Աւետիս Վառելճեան, Սամսունաբնակ - Միքայէլ Թոգաթլեան, Մկրտիչ Զամիչեան. այս վերջին երկուսը 10 օր առաջ պէրատի վաստակած լինելով, տեղս հասնելուն ազատ թողուեցան։ Կը լսենք, որ Զարշամպայի մէջ նոր ձերբակալութիւններ ևս տեղի ունեցած են. 5-10 օր առաջ Սամսունի մէջ հայկաթոլիկ պատանի մը բանտարկեցին, և պահապան զինուորները խեղճ տղուն պատիւը բռնաբարեցին։ Կաթոլիկներու Առաջն. փոխանորդին բողոքներուն վրայ քննութիւն բացուելով, իրողութիւնը կատարեալապէս հաստատուեցաւ և միայն զոհը արձակեցին բանտէն, առանց վաւաշոտ գազանները պէտք եղածին պէս պատժելու։

ԱՐՄՏԱՆԻ ԽՆԴՐՈՅՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԻՑ)

II

Մ. Գալուստին ուրնկերներուն քննութիւնը։ Կառավարութիւնը, Մ. Գէորգի դրդմամբ, Մկիկ Մկիկ յիշեալները բանտի սիւնին կապելով կապոց մը թացելերով, ծեծել ու քննել կը սկսին։ Մ. Գէորգին զէնք նետելին, Բէֆահիյէ գայմագամին կողոպտելին, սանտըքցի ջորեպանը մեռցնելին, լիճքի Պետրոսը վիրաւորելին, Էօմէր փէհլիվանը սպանելին, պահապան Հիւսէյինը վիրաւորելին, կոմիտէին գոյութիւնը խոստովանելին պահանջելով, մեռնելու աստիճան ծեծելէ վերջ հարկ եղած պահանջին կը գոյացնեն։ Կարգը երբ Մ. Գալուստին կուգայ, „ծեծը քեզի բաշխեցի՝ երկրին պատուաւոր ըլլալուդ համար, սակայն պէտք է դուն ալ ամեն բան խոստովանես“, կը յայտարարէ գայմագամը։ Մ. Գալուստ ոչէ կերպով չխոստովանիր. այս արարողութիւնէն 4 օր վերջ բանտարկեալները կը փոխադրեն Երիզայ, ասոնք ալ եղած զրկանքներ ու տանջանքներն, որոնք Թաղապետական բժիշկը պաշտօնապէս բաբօր ըրած էր, դէմ կը բողոքեն։ Բէմզիի յաջորդը, բանտարկելոց բողքագիրը Գուրուչայի զրկելով, այդ մասին քննութիւններ կատարելին կը պահանջէ։ Գուրուչայի կառավարութիւնը վերի վերոյ տեղեկագիր մը շինելով իրենք զիրենք „մէն՝մուհաբէմ“ կրնեն, և Կարնոյ ամբաստանիչ ատեանն ալ նոյնը կը հաստատէ։

Դատավարութիւնը։ Խնդրոյն ծագումէն միայն երեք տարի վերջ, 1894 Ապրիլ 13-ին սկսաւ դատավարութիւնը. ամբողջ 50 հոգի, բացի մեռնողներէն, դատարան տարուելով կարգացին ամբաստանագիրը, ուրկից կսկսի դատավարութիւնը։

Պատճէն ամբաստանագրին.— „Կայսերական ժառանգեալ երկիրներուն մէջ բնակող հաւատարիմ հպատակ հայ ազգը օսմանեան կայսերական կառավարութեան դէմ զինեալ ապստամբեցնելու և ժառանգեալ երկիրներուն մէկ մասը կառավարութեան իրաւասութենէն հանելու համար խռովարարական նպատակաւ կոմիտէ անուամբ յեղափոխական ընկերութիւն մը կազմելու և կոմիտէին աջակցողներէն մեծաքանակ գումար մը հաւաքելով, գաղտնի զէնք և ռազմամթերք գնելով մարդասպանութեան և աւարարութեան պաշտօնեաներ կարգելով, ներքին անդորրութիւնը և երկրին խաղաղութիւնը մասամբ վրդովելով, հաւատարիմ ժողովուրդը վնասելով և յեղափոխական ընկերութեան մասնակցելով, շատ մը տեղեր շրջելով, վնասակար թղթեր ցրելով և այս միութեան գաղտնիքը երբ կառավարութիւնն իմանալով, գոյութիւնը ստուգելու և իմացնելու պաշտօնեայ կարգուող արմտանցի Էօմէր փէհլիվանը ու Քէօսէեան Սերոբը մեռցնելով և ասոնցմէ Էօմէր փէհլիվանին դիակը՝ քարիւղը այրելով և միւսիւր Մ. Գէորգը սպանելու նպատակաւ բազմաթիւ հրազէն պարպելով ու վիրաւորելով, ձերբակալման պաշտօ-

նեայ ոստիկան զինուորներէն Հասան չավուշին և Նորա հրամանին տակ գտնուող ոստիկան զինուորաց և ժողովրդոց միանգամայն սպանելու նպատակաւ զէնք գործածելով, պահապան Հիւսէինը վիրաւորելով, Սատգդի ջորեպան Մուհամմէդը սպանելով և լեճքցի միւտիր Պետրոսը ծանրապէս վիրաւորելով Բէֆահէյցէի գայմագամ Մուհամմէդ Սատըգ էֆէնտին և ընկերներուն հասարակաց ժամեան վրայ առջևը ելնելով, գոյքերնին ու ստացուածքնին կողոպտած ըլլալով. այս ամենը խուովարարաց նախագահ Արիանեան Գալուստի անուամբը հռչակաւոր Փաշայեան Կարապետի և քննութեան մէջ անուններն յիշուած նոցա ընկերներու մասին, առաջ և վերջը Գուրուչայի, Բէֆահիցէի և Երզնկայի հարցաքննութեան պաշտօնատուններէն տեղեկագրուած ստուգութեանց համաձայն, Էրզրումի ամբաստանիչ ժողովէն շարագրուած 308 յունուար 8 թուական և 300 թուհամար տեղեկագրոյն մէջ մանրամասնութեամբ բացատրուած ըլլալով, յիշեալ կասկածելիներէն անուամբը հռչակաւոր Փաշայեան Կարապետ բժշկութիւն ընելու պատրուակով մեծ և փոքր Արմտանները երկք տարիէն աւելի յարատևելով հայ ազգը կայսերական կառավարութեան իրաւասութենէն խռովարարական նպատակաւ, նախնական քննութեանց պաշտօնագրոց մէջ անուններն յիշուած անձերու հետ կազմակերպած գաղտնի կոմիտէից համար ուխտագիր և ծրագիր յօրինելով ու ստորագրութեան տակ առնելով, իւր խռովայոյզ նպատակը անձամբ ինք վարելով և իր բացակայութեանը փախստական եղող Մ. Գալուստը նախագահ կարգելով և անդամներ ընտրելով, ինչպէս պատուելի Խաչատուրն և պատուելի Նշանը յիշեալ ծրագրին տրամադրութիւնը գործադրելու ընկերութեան յառաջադիմութեան միջոցները դիւրացնելու և դրական պարտականութիւնները կատարելու համար, հարկ եղած հաղորդակցութեան Նախութեան Սարգիսը պաշտօնից կարգելով ու ձեռնարկուած խռովարական նպատակներուն գործադրման համար զինեալ ըլլալով, աստին անդին հանդիպած մարդիկը սպանելու և կողոպտելու վնասակար ձեռնարկին ի կատար հանելու համար սարսափիչ անուամբ յիշեալ Սարգիսը, Մկրտիչը և Գէորգը՝ ընտրելով և Մ. Գալուստին և պատուելի Խաչատրին, խորհրդին ու հրահանգին հնազանդելու պարտաւորիչ կոմիթէ մը կազմած ու գումարած ըլլալնին և իրը քարիւղ թիթեղներու մէջ դնելով բերած ու պահած վառօդնին կայսեր. կառավարութեան միջոցաւ երևան հանուելը և ասիկայ անձնուէր ընկերներուն խոստովանութիւնէն և տուներին ելած և ի ձեռին գտնուած բազմաթիւ վնասակար թղթերուն զանազան պարունակութիւնները և մէկ մէկու վերագրած յանցանքներու խոստովանութիւնը և եղելութիւնները մինչ կառավարութեան հասնելով՝ ձերբակալման ձեռնարկելու միջոցին ոմանց փախչիլը և կոմիթէին աջակցելով նիւթապէս և ֆիզիկապէս ծառայելէ խոյս տուողները Գրանսերէն կօնեաք նշանակած կնիքով կնքուած և սարսափիչ ստորագրութեամբ ստորագրուած սպանուիլն ծանուցանող տոմսերով շատ մը անձեր սարսափեցուցած ըլլալնին վաւերացեալ լինելով և Էօմէր փէհլիվանը, Քէօսէեան Սերոբը կանխամտածութեամբ սպանած ու խեղդած և Էօմէրի դիակը այրած ըլլալնին քննութեանց թղթերուն մէջ գրտնուած տեղեկագրած՝ Կէնճեան Նշանին քննութիւնով և Թիւթիւնճեան Մկրտիչի յամառ խոստովանութիւնովը և Էօմէր փէհլիվանի սպանութեանը վերաբերեալ 308 յուլիս 8 թուականաւ շարագրուած և այն ժամանակ իրենց եղած տեղը ղրկուած որոշմանագրերու մէջ բացատրուած և համաձուած փաստերովը ու քննութիւններէ ձեռք բերուած ապացոյցներու օգնութեամբը բացարձակապէս հաստատուած, գայմագամ Սատղոգ էֆ-ին ու ընկերները կողոպտած ըլլալնին ոչ դատախազներու կողմէն ճանաչուած և այս մասին հարցաքննուած մարդոց երդումով տուած վկայութիւններովը հաստատուած ձերբակալման պաշտօնեայ Հասան չավուշին և հետևորդաց դիմադրելով սպանելու նպատակաւ գնդակ նետելնին և պահապան Հիւսէինը վիրաւորած և խեղանդամ ըրած ըլլալնին, Թիւթիւնճեան Մկրտչին և Կէնճեան Նշանին յայտարարութիւններովը և ոստիկան զինուորներու քննութիւններով վաւերացած ըլլալով և ծպտեալ քիւրդ, լազ հագուստներով ապաստանած քարայրնուն մէջէն շատ մը դիմադրութիւններէ վերջ էր տալով մէկ մասը ողջ զինեալ և ոմանք ալ վիրաւոր ու մեռած ձերբակալելնուն փաստովը վաւերանալով և ճշգրտուելով տօքթ. Կ. Փաշայեանը և Մ. Գալուստը և իրենց ամբողջ ընկերները պատժական օրինագրքին 170, 56, 55, 54 յօդուածներուն տրամադրութեամբ եղեռնական ամբաստանութեամբ դատուելնին որոշուած է։

ՆԻՒՐԱՏԻՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿԸ

Ապառաժից 500 ռուբլի, Հայկից 100 ռուբ., Թերթից 2 ռուբ., Ակռ-ի „Վրէժ“ խմբ. 100 ռուբ., Դրիմի № ք-ից 400 ռուբ., Ակռ.ք-ից 100 ռուբ., Շամշ-ից 12 ռուբ., Խ. ուս. գր. 30 ռուբ., Իրիսից Թ. № 177 610 ռուբլի։

Պողպատից 117 ատրճանակ, 21 հրացան և 670 հազար փամփուշտ։

Վիշապ քաղաքի կետր. սնդուկի մէջ ստացուեցան.

Գնդակ 60 դահեկան, Հայկ Արամ ընկերութ. 25 դահ., Առիւծ 15 մէջիդիէ ևս 81 դհ., Փառնակ 100 դհ., Կարապետ 35 դհ., Արշակաւան քղ. Սասուն խմբ. 50 ևս 150 դհ., Դիւր խմբ. 80 դհ., Թաթուլ խմբ. 74 դհ., Պիծակ 50 դհ., Քրդակուլ խմբ. 160 դհ., Անձնանուէր խմբ. 50 ևս 90 ևս 31 դհ., Անի խմբ. 20 ևս 90 դհ., Հայկեան խմբ. 120 դհ., Հ. Մ. Դրօշ. 61 դհ.։

Շվ-ի Լ. ք-ից Տիկ. Լ. 10 ֆր., Ժ. ք-ից օր. Ե. 20 ֆր., Ա. 20 ֆր., օր Մ. 25ֆր.։

Հիւսիս. Ամերիկայի Պատ. ք-ից Թ. Թ. 5 դոլլար։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նուիրատուութեան համար դիմել.
L. Bopie, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։